

COVID-19-ի Ընթացքում Հովացման Կենտրոնների Գործունեության Ուղեցույց

Ծայրահեղ շոգը լուրջ սպառնալիք է հանրության առողջությանը: Այն կարող է առաջացնել տարբեր առողջական խնդիրներ՝ սովորական հոգնածությունից մինչև մկանային ջղաձգություն և կյանքի համար վտանգավոր ջերմային հարված: Հովացման կենտրոնները նախատեսված են ծայրահեղ շոգի ժամանակ շոգը մեղմացնելու և պաշտպանություն ապահովելու համար:

Հովացման կենտրոնների անձնակազմի և այցելուների առողջությունն ու անվտանգությունը մեր առաջնահերթությունն է: Քանի որ Առողջության Պատասխանատուի՝ *Աշխատավայրում և Համայնքում Համատեղ Արձագանքի Հրամանը* դեռ ուժի մեջ է, այս ուղեցույցը տրամադրվում է խիստ շոգի ժամանակ հովացման կենտրոնների անվտանգ գործունեության համար:

A. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԴԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հովացման Կենտրոնի յուրաքանչյուր հանրային մուտքի մոտ տեղադրվում է ցուցանակ՝ բոլոր աշխատակիցներին և հանրությանը տեղեկացնելու, որ նրանք չպետք է մուտք գործեն, եթե ունեն հազ, ջերմություն կամ COVID-19-ի այլ ախտանիշներ կամ ակտիվորեն հետևում են մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրամաններին, ինչպես նաև բոլորը պետք է կրեն դիմակ Հովացման Կենտրոնում գտնվելիս՝ անկախ պատվաստման կարգավիճակից: Ցուցանակի օրինակը կարող եք գտնել հետևյալ կայքէջում՝ publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/BestPractices/#signage:
- Հնարավորության դեպքում առաջարկեք այլընտրանքային հովացման վայրեր նրանց համար, որոնց մոտ դրսևորվում են COVID-19 հիվանդության ախտանիշներ: Այդ վայրերը ախտանիշներ ունեցող յուրաքանչյուր անձի համար պետք է նախատեսեն առանձին սենյակներ Հովացման Կենտրոնի ներսում:
- Հնարավորության դեպքում ձեռնարկեք քայլեր Հովացման Կենտրոնում մարդկային կուտակումները նվազեցնելու համար՝ կրճատելով հաստատության մուտքի և ելքի նեղ ուղիները, առանձնացնելով նստատեղերը և հասանելիություն տալով զուգարաններին:
- Մուտքերի և ընդհանուր տարածքների մոտ տեղադրեք ձեռքերի ախտահանիչ միջոցներ և հավաստիացեք, որ հաստատության ներսում հասանելի են օճառ և ջուր: Հանրության համար որպես կանոն հասանելի զուգարանները պետք է շարունակեն հասանելի լինել:
- Տեղադրեք ցուցանակներ ամբողջ հաստատությունում շնչառական սարքերի օգտագործման կարգի, ձեռքերը լվանալու և դիմակներ կրելու վերաբերյալ: Ցուցանակի օրինակը կարող եք գտնել հետևյալ կայքէջում՝ publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/BestPractices/#signage:
- Եթե Հովացման Կենտրոնը թույլ է տալիս ուտել և խմել փակ տարածքում, ստեղծեք նստատեղերով հատուկ տարածք՝ հեռու մյուսներից, որը պետք է օգտագործվի ուտող և խմող այցելուների համար: Այն վայրերը, որոնք թույլ են տալիս ներսում ուտել կամ խմել, համարվում են ավելի բարձր վտանգավորության վայրեր, քանի որ պատվաստված և չպատվաստված անձինք երկար ժամանակ գտնվում են փակ տարածքում և կարող են հանել իրենց դիմակները ուտելու կամ խմելու համար: Նախատեսված տարածքից օգտվող այցելուները ուտելու կամ խմելու ընթացքում պետք է կարողանան մյուսներից պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն: Տարածքի ցուցանակը պետք է հիշեցնի այցելուներին, որ ուտելիս և խմելիս նրանք պետք է նստած լինեն, և կարող են հանել իրենց դիմակը միայն երբ ակտիվորեն ուտում կամ խմում են: Մնացած ամբողջ ժամանակ այցելուները պետք է դիմակ կրեն:
- Հնարավորության դեպքում քայլեր ձեռնարկեք Հովացման Կենտրոնում օդափոխությունը ավելացնելու համար: Հավաստիացեք, որ Հովացման Կենտրոնի HVAC համակարգը լավ, գործող վիճակում է: Դիտարկեք բարձր արդյունավետությամբ, օդը մաքրող շարժական

սարքերի տեղադրումը, շենքի օդի զտիչների քանակի հնարավորինս ավելացումը և այլ փոփոխություններ՝ ավելացնելու արտաքին օդի և օդափոխության քանակը բոլոր աշխատանքային տարածքներում: Նվազեցրեք զբաղվածությունը այն տարածքներում, որտեղ բացօթյա օդափոխությունը հնարավոր չէ ավելացնել: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [CDPH-ի Փակ Տարածքներում Օդափոխության, Օդի զտման և Օդի Որակի Ապահովման Ժամանակավոր Ուղեցույցը](#):

- Նշանակեք անձնակազմի անդամ, որն ամեն օր կամավոր կգրանցի այցելուներին (տե՛ս Հավելված Ա): Այցելուների ամենօրյա ցուցակ ունենալը կարող է օգտակար լինել COVID-19-ի դրական դեպքի ժամանակ, երբ Հովացման Կենտրոնին անհրաժեշտ լինի կապ հաստատել կոնտակտների հետ՝ վարակված անձի հետ շփման մասին նրանց տեղեկացնելու համար: Անձնակազմը պետք է պահպանի նաև այն այցելուների թիվը, որոնք հրաժարվում են գրանցվել: Պահպանեք ամեն օր Հովացման Կենտրոնում գտնվող անձնակազմի և կամավորների մասին գրառումները:
- Հետևեք Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների (CDC) [մաքրման և ախտահանման ուղեցույցներին համայնքային հաստատությունների համար](#), և [հաստատությունների մաքրումը որևէ անձի հիվանդ լինելու դեպքում](#):
- Հաստատության ղեկավարության կողմից կարգադրված այլ գործողությունների իրականացում:

B. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հովացման Կենտրոնները պետք է իրականացնեն անձնակազմի անդամների, կամավորների, վաճառողների, պայմանագրային աշխատողների և մյուս աշխատողների COVID-19-ի ախտանիշների ստուգում: Բոլոր աշխատակիցները պետք է ստուգվեն ախտանիշների համար իրենց հերթափոխից առաջ: Ստուգման տարբերակները ներառում են՝ անձնակազմի անդամի կողմից Հովացման Կենտրոն գալուց առաջ իր ախտանիշների գնահատում, աշխատավայրի մուտքի մոտ ցուցանակների կիրառում կամ տեղում ախտանիշների ամենօրյա ստուգում՝ ամրապնդելու հաղորդագրությունը, համաձայն որի COVID-19-ի ախտանիշներ ունեցող, ինչպես նաև մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո գտնվող աշխատակիցները չպետք է մուտք գործեն աշխատավայր: Մուտքի ստուգման օրինակի համար տե՛ս՝ publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/business/EntryScreening.pdf:
- Աշխատակցին կարգադրվում է մնալ տանը, եթե վատառողջ է: Աշխատակցին, որը հայտնում է հիվանդ լինելու մասին կամ նրա մոտ դրսևորվում են հիվանդության նշաններ, պետք է հանձնարարել լքել հաստատությունը և դիմել համապատասխան բուժօգնության: Համոզվեք, որ COVID-19-ով վարակված անձինք հետևում են [նրբամեկուսացման](#) հրահանգներին: Աշխատակիցը, ով սերտ շփում ունի վարակված անձի հետ, պետք է [կարանտին պահպանի](#), եթե ազատված չէ կարանտին պահպանելու պահանջից: Վերահսկեք COVID-19-ով վարակված անձանց հետ շփումներն աշխատավայրում աշխատակցի վարակված լինելու մասին տեղեկանալուն պես՝ հնարավորինս շուտ բացահայտելով վարակված անձին և այդ մասին տեղեկացնելով նրա հետ շփում ունեցած անձանց (կոնտակտներ): Ունեցեք ծրագիր՝ թեստավորում առաջարկելու այն աշխատակիցներին, որոնք, հնարավոր է, աշխատավայրում շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ [Արձագանք COVID-19-ին Աշխատավայրում](#):
- Աշխատակիցներից պահանջվում է մշտապես կրել դիմակ՝ բացառությամբ ընդմիջման ժամին նախատեսված տարածքներում ուտելիս կամ խմելիս: Դիմակների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի Դիմակների կայքէջը՝ publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/masks/:

- Աշխատակիցներին խրախուսվում է, սակայն չի պարտադրվում, պահպանել առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն անձնակազմի մյուս անդամներից և այցելուներից:
- Աշխատակիցներից պահանջվում է լվանալ կամ ախտահանել ձեռքերը հերթափոխից առաջ/հետո, ընդմիջումներից առաջ/ հետո և հետևյալ գործողություններից յուրաքանչյուրից հետո՝ զուգարանից օգտվելուց, ուտելուց, հաստատություն մուտք գործելուց կամ լքելուց, ինչպես նաև հաճախակի հպման մակերեսներին դիպչելուց հետո (դռների բռնակներ, Յեռուստացույցի վահանակներ, բազրիքներ և այլն)՝ օգտագործելով ձեռքերի ախտահանիչ միջոց կամ օճառ և ջուր, որոնք առկա են հաստատությունում:
- Աշխատակիցներին անհրաժեշտ է խրախուսել հնարավորության դեպքում ճաշի ընդմիջումները կատարել բացօթյա վայրում կամ միայնակ փակ սենյակում: Եթե աշխատակիցը պետք է ուտի փակ սենյակում, նա պետք է լինի նստած և մյուսներից գտնվի առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա, եթե ուտում է փակ տարածքում՝ մյուս աշխատակիցների հետ միասին:
- Աշխատակիցներին կարգադրվում է հետևել ստանդարտ ընթացակարգերին՝ զանգահարելու 911 այն անձանց համար, ովքեր վշտացած են կամ շտապ օգնության կարիք ունեն:
- Անձնակազմը պետք է ստանա այս ուղեցույցի պատճենը:

C. ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՈՒՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Տեղադրված ցուցանակների միջոցով այցելուներին տեղեկացվում է, որ նրանք չպետք է մուտք գործեն, եթե հիվանդ են կամ հետևում են մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրամաններին:
 - *Աշխատակիցը խորհուրդ կտա հեռանալ և դիմել համապատասխան բուժօգնության բոլոր այն անձանց, որոնք հայտնում են հիվանդ լինելու մասին կամ նրանց մոտ դրսևորվում են հիվանդության նշաններ, կամ, հասանելիության դեպքում, այդ մարդուն կուղարկի Յեռուստացման Կենտրոնի մեկ այլ տարածք՝ նախատեսված ախտանիշներ ունեցող (սիմպտոմատիկ) անձանց համար:*
- Այցելուներից պահանջվում է մշտապես կրել դիմակ:
 - *Աշխատակիցը կանոններին չհետևող անձանց կտեղեկացնի, որ պահանջվում է կրել դիմակ:*
 - *Հնարավորության դեպքում աշխատակիցը կտրամադրի դիմակ նրանց, ովքեր ժամանում են առանց դիմակի:*
- Այցելուներին խրախուսվում է, սակայն չի պարտադրվում, ուրիշներից պահպանել առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն:
- Այցելուների համար հաստատության տարածքում հասանելի են ձեռքերի ախտահանիչ միջոց, օճառ և ջուր:
 - *Աշխատակիցն այցելուներին կհիշեցնի հաճախակի լվանալ կամ ախտահանել ձեռքերը, այդ թվում՝ հաստատություն մուտք գործելու և դուրս գալու ժամանակ:*
- Այցելուները կարող են բերել իրենց սնունդը և ըմպելիքը: Թույլատրվում է սննդի առաքում: Այցելուները կարող են ուտել կամ խմել միայն Յեռուստացման Կենտրոնի նախատեսված վայրերում: Այդ վայրերը պետք է դասավորված լինեն այնպես, որ այդ վայրում գտնվող մարդկանց միջև հնարավոր լինի պահպանել առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն: Այցելուներին պետք է հիշեցնել կրել դիմակ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք ակտիվորեն ուտում կամ խմում են: Ուտելուց կամ խմելուց հետո նրանք պետք է անմիջապես դնեն դիմակը: Հաստատությունը չի կարող պահել կամ սառեցնել այցելուների համար նախատեսված սնունդը կամ ըմպելիքները: Համատեղ ուտելի արգելվում է:

Բացառություն. Միևնույն ընտանիքի կամ տան անդամները:

 - *Աշխատակիցը այցելուներին կտեղեկացնի, որ անհրաժեշտ է ուտել և խմել միայն*

հաստատության նախատեսված վայրերում:

- Աշխատակիցն այցելուներին կհիշեցնի, որ նրանք կարող են կարճ ժամանակով հանել դիմակները, երբ ուտում կամ խմում են, սակայն պետք է անմիջապես կրեն դիմակները, երբ ավարտեն ուտելը կամ խմելը:
- Աշխատակիցը պետք է սնունդը կամ ըմպելիքը պահել առաջարկող ցանկացած այցելուի տեղեկացնի, որ սննդի կամ ըմպելիքի պահպանում չի թույլատրվում:
- Աշխատակիցը սննդի ոչ պատշաճ համատեղ օգտագործման դեպքում կխնդրի դադարեցնել այն:

ՀԱՎԵԼՎԱԾ A:
ՀՈՎԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

ՀՈՎԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՈՒՆԸ՝ _____

ՀՈՎԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՑԵՆ՝ _____

ՕՐԿԱ ԱՄՍԱԹԻՎԸ՝ _____

ԱՆՈՒՆԸ	ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ
(1)	
(2)	
(3)	
(4)	
(5)	
(6)	
(7)	
(8)	
(9)	
(10)	
(11)	
(12)	
(13)	
(14)	
(15)	
(16)	
(17)	
(18)	
(19)	
(20)	
(21)	
(22)	
(23)	
(24)	

ԱՆՈՒՆԸ	ՋԵՌԱԽՈՍԱՐՁԱՄԱՐԸ
(25)	
(26)	
(27)	
(28)	
(29)	
(30)	
(31)	
(32)	
(33)	
(34)	
(35)	
(36)	
(37)	
(38)	
(39)	
(40)	
(41)	
(42)	
(43)	
(44)	
(45)	
(46)	
(47)	
(48)	
(49)	
(50)	
(51)	
(52)	
(53)	

ԱՆՈՒՆԸ	ՉԵՌԱԽՈՍԱՅԱՄԱՐԸ
(54)	
(55)	
(56)	
(57)	
(58)	
(59)	
(60)	
(61)	
(62)	
(63)	
(64)	
(65)	
(66)	
(67)	
(68)	
(69)	
(70)	
(71)	
(72)	
(73)	
(74)	
(75)	
(76)	
(77)	
(78)	
(79)	
(80)	

ՕՐԿԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ _____

(մուտք գործողների քանակը՝ գրառումների թերթիկից + գրանցվել չցանկացող անձանց թիվը)